ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2016թ. թիվ 484-Ա

Ս.ՀՈՒՆԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 34 կետը և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Սամվել Սերյոժայի Հունանյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ 2016 թվականի դեկտեմբերի 15-ից:

2. Ս.Հունանյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 15
ք.Վանաձոր